### ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ

# ՈՐՈՇՈՒՄԸ

## ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻ ԱՃՅՈՒՆՆ ԱՄՓՈՓՈՂ ՍԱՐԿՈՖԱԳԻ ՏԵՂԻ ՄԱՍԻՆ

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և ՍՍՌ Միության Մինիստրների Սովետը որոշում են՝

Ի. Վ. Ստալինի աճյունն ամփոփող սարկոֆագը դնել Կարմիր հրապարակի դամբարանում, Վ. Ի. Լենինի սարկոֆագի կողքին։

| ՍՄԿՊ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ | ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏ |
|---|---|

### ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆՍԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ

# ՈՐՈՇՈՒՄԸ

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԻ ՄԵԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՎԵՐԺ ՓԱՌՔԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ՊԱՆԹԵՈՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և ՍՍՌ Միության Մինիստրների Սովետը որոշում են՝

Մեծ առաջնորդներ Վլադիմիր Իլյիչ Լենինի և Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի, ինչպես նաև Կոմունիստական պարտիայի ու Սովետական պետության՝ Կարմիր հրապարակում Կրեմլի պարսպի մոտ թաղված ականավոր գործիչների հիշատակը հավերժացնելու նպատակով Մոսկվայում կառուցել

մոնումենտալ շենք՝ պանթեոն — Սովետական երկրի մեծ մարդկանց հավերժ փառքի հուշարձան:

Պանթեոնի կառուցումն ավարտելուց հետո այնտեղ փոխադրել Վ. Ի. Լենինի սարկոֆագը և Ի. Վ. Ստալինի սարկոֆագը, ինչպես նաև Կոմունիստական պարտիայի ու Սովետական պետության՝ Կրեմլի պարսպի մոտ թաղված ականավոր գործիչների աճյունները և Պանթեոնի մուտքը բացել աշխատավորների լայն մասսաների համար:

ՍՄԿՊ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏ

